

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50^{րդ} ՏԱՐԻ, ԹԻՒ 45

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

10 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԻՒԱՆԴ ԹԷ ԱՌՈՂՋ (Խմբագրական)	Տ. Ս.
ՈՉ ՈՔ (Բանաստեղծություն)	Գ. ԶՕՀՐԱՊ
ՊՏՈՅՏ ՄԸ ՊԵՐԼԻՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ	Հ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ
ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. Քեյք Թաունի մեջ	ՄԴԷԼԼԱ
ԵՐԿՈՒՔԻ ԲԱԺՆՈՒԱԾ	Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ
«ՄԱՏԼԷՆԻ ՄԵՂՔԸ» — Թերթոն.	Թարգմ. ՏՕՄԻՆՕ
ՀԵՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ	Գ. Ս. ՇԱՀՊԱՋ
ՅՈՒՇԱՏԵՏՐ	

Մասիս շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ ղրԵ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ ղրԵ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 ռուպլի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուի : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն ամսոյ մէկէն : Մասիս հրատարակ կ'ելլէ ամեն շաբաթ առտու, եւ կը գտնուի Բերայի բոլոր ծխափանառներուն ու Պահչե-Գաբուի ջրափանառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալաթիոյ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրափանառներուն հոյ :

Չեղբէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՍՅԷ

درعليه ده غلعه ده «ماسيس» غزته سى اداره سى

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալարա-Սէրայի Լիսէին դէմ

Ամեն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը դարձանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով, ստամոքսի, աղեաց, միզական ճարձաններու հիւանդութիւնները, ջղային սխառութիւնները, գաղխական ախտերը (սիֆիլիս եւլն) եւ մոտրթի հիւանդութիւնները:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:



Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ու ոտքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ զժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ գիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ, ՄԵԾ ԲՈՂՈՑ, Կալարա Սէրայի Լիսէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ. } 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ. } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կասաբեալ երաւիաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՏԱԳՍԻՍ ԹԱԳՍԻՍ
ՄԱՍԻՍ Ե. ՄԱՍԻՍ

Այս անգամ, Գիսակն է, — կրօնական ու բարոյական, գեղեցիկ տեսութիւններու հեղինակ՝ յարգոյ Պատուելին, — որ իր գրչի քարոզութեանց նիւթ կ'ընտրէ նորավէպի սեռը զոր կը մեղադրէ ու կը դատապարտէ՝ մուրեալ ընթերցողներուն աչքին առջեւ պարզելով պատկերներ որոնցմէ տհաքեկ՝ գրիչը պիտի նետէր նորավէպի էն մեծ վարպետն անգամ ու քաշուէր գրական հրապարակէն։ Իրաւ այդպէ՞ս է սակայն եւ գրական այդ գեղեցիկ սեռը իրեն վերագրուած բարոյական նախճիրները կը գործէ՞ :

Գիսակ մէկը ըլլալով այն գրողներուն ուրոնք անձով ալ գրիչով ալ բարեկիրթ, հետեւին կարելի է կարծիքներու փոխանակութիւն ունենալ, հաճութեամբ կը փորձուիմ կանգ առնել իր «Առողջ Գրականութիւնը» յօդուածին առջեւ։

Աշխարհիկ գրականութիւնը, զոր Գիսակ կը դատապարտէ, մարմնապաշտութեան կամ նիւթապաշտութեան սերմերը չէ որ կը ցանէ մեր մէջ։ Այս անգամ կենթադրութիւն մը նոյնքան սխալ պիտի ըլլար՝ որքան ըսել թէ Աւագ Տօներու Մատածումները անիրօնութիւն կը ներշնչեն կամ Գիսակն յօդուածները . . . տգիտութիւն կը սփռեն։ Նորավէպը կամ աշխարհիկ գրականութիւնը նոյն համեմատութեամբ հետեւ են նիւթապաշտութեանէ։ Նոյն իսկ հոգւոյ աչքերով զանոնք կարգացող մը չպիտի տեսնէր անոնց մէջ «ամէն այր մարդ մամախանացած անտուն մը եւ ամէն կին բռնաբարուած հրեշտակ մը կամ հաճոյքի առարկայ մը»։ Ինչպէս, մուրաժ կ'ընէ նկարագրող մը՝ աշխարհի բոլոր կ'ընէր ինչպէս ու մուրաժ ցուցնելու ձգտում մը չունենար։ Ընդհակառակը, իր կենդանի պատկերացումները կը ձգտին անխուստի ու մուրաժէ փրկել անգունդին եզրը գտնուողները։ Եւ ըրտացած, անառնացած մարդը նկարագրող վիպագրին նպատակն է՝ հակընդդէմ դնել զայն ազնիւ ու մաքուր զգացումներով տագորուած մարդուն, այս վերջին տխուր ցանկալի դարձնելու համար։ Ռէժիմիէնեան ճառագայթներն են անոնք որ վարդապոյն ու հրապուրիչ մորթէն ներս կը թափանցեն,

մինչեւ փոտած սուրբ ու ազականուած միտք, յստակ հայլի մը պէս անդրադարձնելով զանոնք, իրաւ է թէ տրամազդեցիկ հարազատութեամբ մը։ Մեղք՞ է միթէ, միեւնոյն բանը ընել ընկերային բարքերու, սեռական զգացումներու մասին ալ, գրական որ եւ է ձեւի տակ որ թերեւս կը դառնացունէ կամ կը խորշեցնէ, բայց չի խաբեր ու չ'ապականեր։ Եւ յետոյ, ո՞վ կ'ըսէ թէ գրական հոգերը խառնուներուն պաշտօնը միմիայն կողմ քարերը ցոյց տալն է, առանց բնաւ զանոնք փշրելու ու թանկագին մասերըն ալ երեւան բերելու։ Վարպետի ձեւքով գրուած վէպերն ու նորավէպերը, — եւ խօսքս անոնց համար է միայն, — գրեթէ միշտ սիրային հերոսին քով կը ցուցադրեն սիրոյ զոհը, մոլիին քով գլխահարը, խաբողին քով խաբուածը։ Եզրակացութիւն չեն հաներ անոնք, դաս մը չեն տար. ընթերցողին կը թողուն ազգուիլ, տըպաւորուիլ։ Օրինակներուն ամէնէն հոյակապը առնենք, եթէ կուզէք, Գառնիկա-գառնիկ Տիկիկը որ ցոխակեաց, տարփալի, շուայլ կ'ընէր կը նկարագրէ, կ'աշխարհիկ կ'ընէր, որուն ստուերագիծը իսկ սոսկում պիտի պատճառէր նախապաշարումով մտածողին։ Եւ սակայն այդ վէպը, որ մեր մէջ իսկ երկու անգամ թարգմանուելու ըտզգին արժանացաւ, քանի՜ կ'ընէր վրայ փրկարար ազդեցութիւն ունեցած է արդեօք աշխարհի չորս անկիւններուն մէջ՝ Մատկիթ Կօթիէի աղքատացած պարտականներէ պաշարուած ցաւագին ոգեւորքին նկարագրութեամբը եւ գերեզմանէն հանուող սրգնուած մարմինն քառամեցուզիչ պատկերովը։ Տիւմա Որդին մոլութիւն քարոզած եղաւ իր այդ «հիւանդարոյր» գիրքովը թէ առաքինութիւն։

Գառնալով մեր գրականութեան պլատիկ սահմաններուն, հոն ալ վերջին 15-20 տարիներուն մէջ մօտ գտած է հովուերգութեանէ քիչ մը շատ հեռացող գրական սեռ մը, իրական կեանքէ առնուած ու երբեմն ալ հոգեւանական նորավէպին սեռը։ Բայց եթէ իրաւ է որ բարոյականի ուրացումը կը պատկերացուի անոնց մէջ, ու կեղծիքին ծաւալումը, աղիէ չի՝ հետեւի որ այդ գրուածք-

ները անբարոյութիւն ու կեղծաւորութիւն կը քարոզեն : Առաքինութեան գիմակին տակ ծածկուած մոլութիւնը գիմակազուրկ ընող գրիչ մը՝ իր ապրած միջավայրին ու ընկերութեան մէջ այդ գիմակներուն վար առնուիլը պահանջող մըն է եւ ոչ թէ գրչի երկնեանդ բացատրութիւններով զանոնք հրապուրիչ դարձնել ուզող մը :

Կեղծաւորութեան ու մոլութեան դէմ նոյնքան հաւասար զէնքերով մաքառած կըլլայ վիպագիր մը իր պրպտումներովը՝ մարդկային սրտի խաւերուն ու զգացումներուն, որքան բարոյականի դասախօս մը ու կրօնի քարոզիչ մը . տարբերութիւնը գրութեան, ձեւին մէջ է, երկուքին նպատակակէտն ալ նոյնը ըլլալով գրեթէ : Ո՞րն է այն գրագէտը կամ վիպագիրը որ ըսել ուզած ըլլայ մոլիին, ապականուած մարդուն, թէ «Ճամբան այդ է, գնա՛, քալէ՛, ուղիղ ճամբայ չկայ» : Միթէ գժաղքը նկարագրողները արքայութիւնը կ'ուրանա՞ն :

Ո՛չ, վատառողջ չէ այն գրականութիւնը որուն դէմ գուք ալ ձեր քարը նետելու կը փորձուիք, յարգելի՛ Գիտակ : Անշուշտ հեռուեալ էք անոր զանազան ձեւերուն ու սեւերուն, վիպականին մանաւանդ, եւ չեմ կարծեր որ հանդիպած ըլլաք սա տեսակ վարդապետութեան մը զոր անոր կը վերագրէք, իրր թէ «բարոյականի վէրքը դարմանելու տեղ՝ կը սորվեցնէ անուցանել, պահել զայն» : Ու նոյնքան սխալ է՝ զայն վատառողջ հոշակելը որքան կարճատեւ ու առօրեայ : Ո՞վ կ'արգիլէ որ ասողը գրականութիւն ընել ու զողները իրենց ըմբռնումին ու ճաշակին հետեւին, ընթերցող հասարակութեան գնահատումին ու գատողութեանը թողլով մնացածը : Եւ միթէ «այս օրուան գրականութիւնը ձեռքին մէջ բռնող դասակարգը» նորավէպո՞վ միայն կը անուցանէ իր ընթերցողները . ասանին ու ընկերային հարցերու, նկարագրականներու, մանուկներու աշխարհի վերաբերեալ նօթերու, գրախօսականներու, արհեստագիտականներու եւ բանաստեղծութեանց չարքին մէջ նորավէպին ընծայած պէտպիտութիւնը այդքա՞ն մեծ է միթէ, ողողելով, մոռցնելով բոլորը, ինք մինակը գրաւելու հա-

մար ամբողջութիւնը Թերթին կամ Հանդէսին : Այդ տեսութեամբ, նախ պէտք էր որ օրավերթերէն արտաքսուէին թարգմանածոյ թերթօնները, — ս.մէնքն ալ «վատառողջ գրականութեան» արդիւնք եղող վիպասանութիւններ, լայն ու խոշոր ձեւը նորավէպին, եւ հետեւարար աւելի՛ ապականաբար :

Բայց ենթացելով որ վէպը կամ նորավէպը չինիչ բան մը չունենային իրենց մէջ, ո՞վ կըսէ թէ լրագրութիւնը բանջարանոց մըն է անպատճառ, որ միմիայն անուղղ պէտք է մատակարարէ լիաթոք, ասանց իր ընդարձակ սահմաններուն մէջ անկիւն մըն ալ վերապահելու բուրաստանի մը, փայթ չէ թէ անոր ծաղիկները քիչ մը զգլիւն ըլլան ու բուրմունքին գինովցնող : Միթէ գեղեցկագիտութիւնը, զուտ գրականութիւնը, բանաստեղծութիւնը պէտք է ուրանա՞լ կրթական, տնտեսական ու բարոյական յօդուածներու չարքին առատութեանը առջեւ . անշուշտ վերջինները շատ աւելի օգտակար կը հանդիսանան քան առաջինները, բայց մերժե՞նք ասոնց ալ հաճելի, սիրուն հանգամանքը, որովհետեւ խրաչողներ, գայթակղողներ կան : Ինչո՞ւ մարդ կանգ կ'առնէ, իր գործէն վերադարձին, բնութեան աղւտ մէկ տեսարանին առջեւ որ գրական օգուտ մը չունի իրեն համար, բայց վայելք մըն է աչքի, ու կը կազդուէր զինքը օրուան յօգնութիւններէն, մտազրազումներէն, Միտքն ու սիրտն ալ պէտք ունին այդ վայելքին, որ վիպական գրականութիւնն է, այնքան միայն արժանի վատառողջ կոչուելու՝ որքան բնութեան վատառողջ պատկերները պիտի կոչէինք մարմնող վերջալոյս մը, աշնային դալկահար տեսարան մը կամ մեղախաղի եղանակ մը որ կը նուազի անջրպէտին մէջ :

Ինչպէս կեանքի հասարակ պայմաններուն, այնպէս ալ գրականութեան մէջ մտքի վայելքը ու սրտի հաճոյքը բոլորովին տաքամերժել ուզելն է նրթապաշտութիւնը :

Տ. Ս.

Երևանի քաղաքի միջնապետը միջոցներ է
 օգտագործում իր հեղինակությունը՝ պահանջելով
 անհատներից ուղիղ գնումը **Պաճախի մրն է հո**
 մարտի 1-ին թվականից **Նուագներով՝ ռաի**
 օգտագործարարը՝ **Որ մասիդ ծայրը**

Կը սարսըռայ, կ'ը
Երգեր մոռցուի, Ե
Խոր փոխերնին քո
Ու շրփելով գոց ա
Կ'անցնին կարգով

Նախ երգեր օրօր
Որոնցով մալբա
Ու խօս երգերն իմ
Զոր տակաին գիս

ԿԵՐՉՐ, սիրոյ երգ
Կես մը իրաւ, կէ
Նեհեցի չորս դին
Ծաղկանց նրման
ԿԵՐՉՐ . . . ԿԵՐՉՐ
Սոյ երգերուն, —
Լըռութիւնը, զոր
Բեհեհ գաւս ո՛չ ոք

Հիւ արարչոյ մարտիրոս զո լմբատ Զմեայ Զմեայ
 զա Զ մի գլխովի Զառ Զոյեմեր 1901 թ. Զմեայ
 Զմեայ Զառար Զգլխով Զոյեմեր Զմեայ Զմեայ

գիսւթեցուն հաղորդեալէր զի մասեցեաց
նց լրոած: Եւ զս. 12. հին քանաճարս զրոտ
պշտունց մանաք Խորհմանքի ազատացոյ քանդմ
րդէ լանկարծ: Եւ զի քարտ չեմէյոյր զի տը

Դժբ. ճանկարիւն ար ճանկարիւնսն ինքն
 ԲԳԵՐԱԻՆԻՆ, իրարմէն զառաւստ ճանկար
 լաժիւպես, զորմէ առաւստն զի զի գրաւորիկ լայ
 (սորմիկն) արաւստն ճանկարիւն ճանկար ճանկար

[illegible]

Երբ որ
 և վր կասակ,
 ամեն or
 Իսկիւն Զահ :
 բոլոր զուարթ
 լազարը մեծ :
 Ինչեւ ցարդ
 արգոյեց :

Գ. ՅՕՀԱՐԱՊ

ՊԷՐԼԻՆԻ ՆՇԱՆԱԽՈՐ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

(ԱՐՁԱՆՈՒՐԳԻ ՆՈՐԵՐ)

planting of the garden, the house of the ...
 0601 b5. 0 5. 1. 1. 1904

Արեւի տաքուկ ոտիկ ճառագայթ մը վա-
րագայրին ճեղքուած քէն շէշտակի անկողնին
վրայ ինկած էր, երբ սպասուհիին խցիկիս
դրանը տուած մէկ քանի ամուր հարուած-
ները ընդոտտ արթնցուցին զիս անուշ քու-
նէս։ Փողըցին անտանելի սպմուկը, որ
պառնդուկին երրորդ յարկի սենեակէս, հախա-
ռակ կրկնակ ապակափեղկերու ու վարագոյր-

ներսը արդու թեան ձայներս կրթափանցելու ա-
 նարգելն արդեալ ինքստեալ տալացոյց մըն էր
 թէ մեծ բազմաբարձրացնէ շատոնց արթնցած
 է իւր անօրեւոյ դոյրձունչու թիւնը սովորա-
 կան եւ անհոյժ ձեռք առած 20 վարժման
 աղցկիւնին համար բաւական ծանր չարձարանք
 մըն է ավտով օրը եւ չի շերտանալ կէսէն
 աւելին անօրաւած ըլլալ լսել հազարումէկ
 տեսակ ձիւքարչ կատրերու անվերջանալի
 աղմկայոյց թաւաղումները եւ կտրական հան-
 լսականքերով օթ օթով ինկրումն հեծելա-
 նիւններու ջղադրգիւ խփոցուիլ եւ ականջ
 խուցնող յաւիտենական զանգահահար թիւն-
 ները անբխաթուղիներու անհեղինակ զգիւ-

գիւններն ու սուղումները եւ վերջապէս ամ-
րախն քարձրացող անորակելի ժխտը, ու-
րոնք ամէնը մէկէն միանալով իրենց ներդա-
նակութեամբը կատարենքու գծնէրի մը հետ
չառ գիւրութեամբ պիտի կրնային մրցիլ
Ժամոցոյցը չէր ժամուան միջոց մը միայն
կը արամադրէր դեռ նոյն օրումն ժամադ-
րութեան հասնելու համար ու մեծ կորուստ
մը պիտի ըլլար արդարեւ պզտիկ, ներքին
ծուրութեան մը հետեւանքով բացակայիլ
որոշեալ աշխատանքի հետաքրքրաշարժ պտոյ-
տէն — ուրեմն շտապելու էր Լուսնային
հագուիլ իւր նախաճաշը մէկ կըլլայ եւ
հաղձեղով վար իջնելով սանդուխներէն
վերջին վայրկեանին իսկ կը յաջողիմ ցաւքել
մեր բազմանիստ անարժանի հանրականքը
(Krämser), որ անմիջապէս ընկերակիցներու
զուարթ գոյում գոջումներուն մէջ ճամբայ
կիլէ գէպի քաղաքի ինքնաշարժային ուր
Allgemeine Elektrizitäts Gesellschaft ան-
շուշտ իր հիւրերուն ժամանումին կը տպառ-
արդէն ան առաջարկէ ինքնաշարժ 0008 կիլո-
մետր որ քիչ շատ ներկայ արհեստագի-
տութեամբ կը հետաքրքրուին ըսած ըլլալու
են անպատճառ անունը այս ընկերութեան
որ իր 14 տարիներու միտք գոյութեամբը
արդէն արեւելեական համար մը շահած է
արհեստական հրապարակին վրայ Թայմի է
որ վերջին տասնեակ տարիներու ընթացքին
եւեկարականութեան ընդհանուր ճարտարա-
ուեստի ու մասնաւորապէս արհեստագիտու-
թեան բազմաթիւ ճիւղերուն մէջ ըրած ան-
համեմատ յառաջդիմական քայլերը իրենց
սկիզբը առած են այն օրէն երբ եւեկարա-
կան հասանքը իր լուսաւորութեան միջոց
ընդունուեցաւ 1883ին Բարիլի միջազգային
արուեստահանգէսին մէջ Էմիլ Ռաթենաւ
ըրած լուսաւորութեան նորադիմ գործիքուն
(Glühlampenներու միջոցաւ) տառապանքի
ները եւ խոտանցած արագան ամէնէն անելի
գերմանացի ճարտարագէտ Emil Rathenau
ընդհամարելով անմիջապէս Compagnie-Con-
tinental-Edison անուն ընկերութեան Գեր-
մանիոյ համար անոր բաժնէն թերեւ ձեռք
ձգեց ու նշանուոր դրամատուներու ա-
ջակցութեամբ ընկերութիւն մը հիմնեց ու

րուն նպատակը եղաւ նախապէս միմիայն
լուսաւորութեան այդ ճիւղը մշակել ու ընդ-
հանրացնել Թալուրթիւնը չուշացաւ քիչ
ատենէն, 1887 թուին գերմանական ընկե-
րութիւնը Allgemeine Elektr. Ges. անուն
տակ բոլորովին անկախօրէն սկսաւ գործել ու
օրընտօրէական յառաջդիմութիւններով ու
գրամագլուխ շտապութիւն թարգմանելով ե-
կաւ հասաւ իր այսօրուան եզական անմրցելի
գիրքին Ա.Ե.Գ. (1) իր գործունէութիւնը տա-
րածած է ուժեղ հասանքի արհեստագիտու-
թեան (Starkstrom-Technik) հասնելու ընդ-
հանուր ճիւղերուն մէջ եւեկարական լուսա-
ւորութիւն, եւեկարական ոյժի փոխանցում
(Kraftübertragung), եւեկարական կեդրոնա-
կան կայաններ, եւեկարական ուղիներ եւ
եւեկարական-քիմիական հաստատութիւններ
Ինչպէս այս ճիւղերուն մէջ հարկաւոր եղող մե-
քենաները, գործիները ու հաղորդանիւթերը
(Leitungsmaterial) առանց բացառութեան ա-
մէնքն ալ կը պատրաստուին իր սեփական
գործատեղիներուն մէջ, որոնք իրենց կարգ
ու հարկով յայտնի ու օրինակելի հաստատու-
թիւններ են Ընկերութեան գործուն գրամա-
գլուխը 65 միլիոն մարք եղած է 1900 տար-
ւոյն վերջը
Մեր պտոյսը կը սկսինք Պրուսները շրա-
սին վրայ գտնուող մեքենաշինութեան գոր-
ծարանէն, որուն զանազան աշխատանոց-
ները միասին 102,000 քառակուսի մեզր տա-
րածութեան մը վրայ կառուցուած են Այ-
դէն մուտքը հիանալի տպաւորութիւն մը կը
թողու մեր վրայ մաքրութիւնն ու կանոնա-
ւորութիւնը կը տիրեն ամէն կողմ առանց բա-
ցառութեան խնամուած գեղեցիկ պարտէզ-
ները, լայն ուղայատակը ու շէնքերու ճար-
տարագեղական ինքնատիւ ձեւերը, ամէնքն
ալ իրենց անհամաճոյ ներդաշնակութեամբ
մեր գեղեցիկ պատկան ճաշակները կը գո-
հացեն իրովին
(1) Արհեստագիտական ու վաճառականական շր-
ջանակներու մէջ «Ալկէմայն-Էլէքթրից Թէթ-Ալէ-
զէլաֆթ» երկայն անուանակոչութեան խոյս տալու
համար այս Բնկ. իր անունը կազմող երեք բառե-
րու սկզբնատառերով, A. E. G. — Ա.Ե.Գ. կը կոչեն
համապատասխան

Գլխավոր շէնքը՝ միայնակ ու ապակե-
ծածկ երկար սրահ մը՝ կը գրաւէ առանձինն
20,700 քառակուսի մեդր զետին մը : Այս
սրահը իր լայնքին զատուած է երկաթէ
բարձակներով (Eisenträger) տասնըհինգ
բաժնեակներու (Abteilung), որոնք ամէնքն
ալ 10 – 20 թօնօ տարողութեամբ խորդակ-
ներէ կը ծառայուին : Իւրաքանչիւր բաժ-
նեակի մէջ որոշ տիպարներով մեքենաներ
միայն կը պատրաստուին , սկսեալ ամէնէն
փոքրերէն , $\frac{1}{8}$ ձիու ոյծով , մինչեւ ամէնէն
մեծերը , 4000 ձիու ոյծով , ցուցադրուած
են հօն : — Երբ մեքենաներու զանազան
մասերուն աշխատութիւնները լրանան ու
նօնքաժն ալ աւարտի , կը փոխադրուին փոր-
ձերու բաժնեակը , ուր՝ նախագծուած պայ-
մաններու համեմատ՝ իրենց գործելու կեր-
պերը եւ կարողութիւնները մանրազնին կը
խուզարկուին . ապա կ'անցնին յարգարման
սրահը , ուրանց վերջնական արդուզարդը ,
ներկ ու փայլ ստանալէն յետոյ , ա'լ պատ-
րաստ կըլլան իրենց որոշուած տեղերը զըր-
կուելու : — Այս հսկայ աշխատանոցին մէջ
մօտ 500 հատ գործի-մեքենաներ (Werkzeug-
maschinen) կան , որոնք ամէնքն ալ իրենց
յատուկ երեք-փուլով հասանքի ելեքտրա-
շարժներու (Drehstrom-Elektromotor) միջո-
ցաւ գործունէութեան կը զրուին : — Այս
Einzelantrieb զրութիւնը թոյլ տուած է որ
հոս աշխատանոցներու կազմակերպութիւնը
աւելի գործնական ձեւ մը առնէ : Նախ
թրանսմիսիօնները բոլորովին անհետացած
են , որով առատապէս եկող լոյսը ազատ
անցք գտած , օդը փոշիէն զզաւապէս մաք-
րուած եւ տիրող ազմուկն ալ նստզեցուցուած
է : Գեղեցիկադիտական տեսակէտով ալ գնա-
հատելի է այս զրութիւնը , որովհետեւ , մա-
նուանդ այսպէս ընդարձակած աւազ գործա-
տեղիներու մէջ , առատապէս մինչեւ յա-
տակը ձգուող հարկւրաւոր թրանսմիսիօն-
ներու ազատ ցանցը , աչքին խիստ անա-
խորժ տպաւորութիւն մը կը թողու : Ասկէ
զատ , գործի-մեքենաները , ինչպէս ուրիշ
ֆապրիքաներու մէջ , այստեղ իրարու քով
եւ մէկ զմի վրայ չարուած չեն , այլ պէտքին
համաձայն զանազան դիրքերով ու հեռաւո-

րութիւններով , այնպէս որ աշխատուելիք
մեքենաներու կտորները կրնան դիւրութեամբ
զետեղուիլ եւ գործաւորներն ալ առանց
զժուարութեան , ժամանակի կորուստի եւ
խանդարումի կրնան ծառայել : — Գործի-մե-
քենաներուն մէջ իրենց բարդ շինուածքով
խիստ պատկառելիները ու մարմնեղները այ-
ցելուին ուշադրութիւնը կը գրաւեն անմի-
ջապէս . — օրինակի համար կը տեսնենք
հարթով մեքենայ մը՝ որ վեց մեդր երկար
մակերեւոյթի մը վրայ կ'աշխատի , հորիզո-
նական ճախարակի մը՝ որ 11 մեդր տրամագի-
ծով խեփորի մը ներքին բեւեռները կը յղէ ,
ինքնաշարժ տեսակ տեսակ մեքենաներ ,
որոնք անհատաւոր արագութեամբ ու ճշ-
դութեամբ ժամը մինչեւ 500 հատ պտու-
տակներ կը պատրաստեն , եւայլն : — Անոնք
որ ասիթը ունեցան Բարիզի վերջին միջազ-
գային ցուցահանդէսին ներկայ գտնուելու ,
տեսած ըլլալու են անշուշտ մեքենաներու
բաժանումին մէջ Աեկիի ցուցադրած վիթ-
խարի 3000 քիլօվատ ելեկտրական մեքենան ,
որու փոխադրութեան համար 6 հատ չագե-
կաւքի վակոններ հարկաւոր եղած էին :

Առանձին յարկի մը տակ զետեղուած է ,
3000 քառակուսի մեդր տարածութեան
վրայ , ձուլարանը , բոլորովին նորագոյն
զրութեան համապատասխանող կազմաւորու-
թեամբ : Հոս կարելի է որոշապէս տեսնել
աներեւակայելի քանակութիւնը բոլոր ա-
պրապրուած ու շինուելու վրայ եղող մեքե-
նաներուն , որոնք ամէնքն ալ իրենց ծան-
րութիւնը , զօրութիւնը , տիպարը եւ ապստը-
րանքին թիւը ցուցնող նշանակներով պիտակ-
ուած են : Ելեկտրական լօքօմօթիվ մը եւ
60 մեդր երկայնութեան վրայ գործող 20
թօնօ տարողութեամբ խորդակի մը , թափ-
ուած երկաթի զանգուածները ձուլարանէն
աշխատանոցները փոխադրելու համար յառ-
կապէս կը ծառայեն հոս : — Յատուկ յար-
կերու տակ բաժնուած են մնացեալ լրացու-
ցիչ աշխատանոցները , ինչպէս դարձնողը ,
ատաղձագործարանը , մետաղներու ձուլա-
րանը եւայլն , ամէնքն ալ իրենց ընդարձա-
կութեամբ եւ կարգ ու կանոնով յանկուցիչ :
Երեքհարկուր մեդր երկարութեամբ ստո-

րերկրեայ անցքի մը մէջէն ելեկտրական կառքով կը փոխադրուինք ընկերութեան երկրորդ՝ մեծ, չորս կարգերու վրայ բարձրացող գործարանը, Աֆրըշքասի վրայ, որ յատկացուած է միմիայն ելեկտրական գործիքներու (Apparate) շինութեան։ Առաջին սրահի մը մէջ, ուր կ'առաջնորդուինք, ցուցադրուած են նմոյշները եւ մանրանկարները բոլոր այս գործիներուն, ելեքտրական լուսավառութեան դրութիւններուն ու զանազան ելեքտրական յարդարումներուն սրտնք Ա. Կ. կէի գլխաւոր մասնաճիւղերը կը կազմեն։ Չափող գործիներու նրութիւնները, հոսանքը ընդմիջող եւ ապահովող կազմածներու գործերու եղանակները, քսանէ աւելի Bogenlampeներու լոյսի պէտպիսութիւնները եւայլն, ամէնքն ալ խնամով եւ մանրամասնօրէն կը պարզեն մեզ առաջնորդող ճարտարագէտները։ Այս սրահին մէջն է որ կը տեսնենք խոհանոցի տեսակ տեսակ ելեքտրական կազմածներ, վառարաններ, արդուկներ, առասաղի հովհարներ, օգտօտիս գործիներ, չոգենաւներու յատուկ զանազան հեռագիրներ, հեռախօսներ, նշանատու գործիներ, թատերական բեմերու շրջանցիլ լուսավառութիւններ, խանութներու համար գոյնգոյն լոյսերով ինքնարբեր սեքլամներու տախտակներ եւայլն։

Գործատեղիներու մէջ հոս ալ վերջին ծայր մաքրութիւնը եւ կանոնաւորութիւնը աչքի կը զարնէ անմիջապէս։ Աշխատաւորներուն բացարձակապէս արգիլուած է գործարանի շրջափակին մէջ ծխելը եւ ոգելից ըմպելիներ գործածելը։ Անաստօղները առանց այլեւայլի ճամբու կը դրուին, անգամ մին ալ չընդունուելու պայմանով։ Բաւական ընդարձակ բաժանումի մը մէջ կը հանգիւլինք կիներու խիստ հետաքրքրաշարժ գործունէութեան։ — ասոնք, մօտ 400 թիւով, առ հասարակ Glühlampe ներու զանազան մասերուն շինութեամբը զբաղած են։ Գաւազնաւոր մը տալու համար արհեստագործութեան այս ճիւղին նրբին աշխատութիւններուն վրայ, յաջորդով քիչ մը մանրամասնարար պիտի նկարագրեմ այն յաջորդական գործողութիւնները, որոնց կենթարկուի հոս

նիւթը, իր վերջնական գործածելի ձեւը ստանալու համար։

ՀՐԱՆԳ ԱՆԴՐԵԱՍԵԱՆ Ճարտարագետ

Յ. Գ. — Մեր լեզուին՝ արհեստագիտական բառերու մասին ունեցած ազգատութեան պատճառով՝ ստիպուած եմ օտար բառեր գործածել յաճախ գրութեանս ընթացքին։ Արդեօք չպիտի ուզէին հայագէտներ, յարմար բառեր գտնելու կամ յօրինելու դժուարին գործին աջակցիլ։

ՇԱՀԵԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԷ

Աստուածաշունչ Մասեկի մասին
Անգղիերէն անասքերթի մը ֆաղուած

Աստուածաշունչ մատեանին մէջ կը գրուելուն 3.566,480 գիր, 810,697 բառ, 1189 գլուխ, 31,173 համար։ Ունի 66 գիրք, որոնց 39ը Հին Կտակարանին եւ 27ը՝ Նոր Կտակարանին մէջ են։ Ամենէն երկար գլուխն է 119րդ Սաղմոսը եւ ամենէն կարճը 117րդ Սաղմոսը, որ է նաեւ Աստուածաշունչին մէջտեղի գլուխը։ Եւ մէջտեղի համարն է 118երորդ Սաղմոսին 8երորդ համարը։ Ամենէն երկար բառը կամ անունը Եսայեայ մարգարէութեան 8երորդ գլխուն մէջ կը գտնուի։ «Տէր» բառը 1,855, «Եւ» բառը 46 627 անգամ յիշուած է։ Եսայեայ մարգարէութեան 37երորդ գլուխը եւ Բ. Թագաւորաց 19երորդ գլուխը, նաեւ 14երորդ Սաղմոսը եւ 53երորդ Սաղմոսը իրարու շատ կը նմանին։ Ամենէն երկար համարն է Եսթրի 8երորդ գլուխ 9երորդ համարը, ամենէն կարճ համարն է Աւետ. ըստ Յովհաննու 11երորդ գլուխ 35երորդ համարը։ Եսթրի գիրքին մէջ Աստուծոյ անունը չկայ։ Աստուածաշունչն է ծառ գիտութեան, որուն պտուղներն են ԳԻՏՈՒԹԻՒՆ, ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ, ՍՐԲՅԻԹԻՒՆ եւ ՍԷՐ։

(Այս տեղեկութիւնը թէպէտ անգլիերէն Աստուածաշունչին կը վերաբերի, սակայն մեծ մասամբ հայերէնի ալ կրնայ պատշաճիլ։)

Գ. Ս. ՇԱՀՊԱՋ

Իսկիւտար 7 Նոյեմ 1901

ԵՐԿՈՒՔԻ ԲԱԺՆՈՒՄԸ

2.565.49.9.23 4.6.92

—•→(→)(←)←—

Հիմա Երբ ժամանակը ու պարագները
խորեն անջրպետմբ պեղծա են իմ եւ
վարժապետութեան անպարէզին միջեւ մի
րեկէ քինծի վերացումի վարկեան մը
գտնելը ու քանի մը րոպէի վաղանցեւ
դորոթեթեան մէջ նկատել յուզումի գողցոյ
հեքով մը անցեալը, ուր էն րոպէսը երազ
ներաւային եւ որ հիմա մորիկի մը թա
փով քինծի հետ ու հետ կը փախչի

Փոփոխումն հազիվ վարժուած կը զգաս ինքզինքս: Մոռացումը միայն տիրման քըլ գտայ հոգեւէ կեանքէ ուրիշ շատ մը պահապաններուն սէս: Գոնէ յիշողութիւնը եթէ չի կրցայ ջնջել, կրցայ քննել զայն, բայց զստանցող հիւանդի մը քննելը, որուն մէջ մարդ րոպէական վերացումներու ակնմանք տեսնուածը, տագնապներով կը տարուբերի ու կը գալարի, դրական աշխարհի մէջ աչք չընդունի մըն ալ բանալէ առաջ: Երբ

Մենք ըստեմ շիտակը , թէ քանի հեռանում
անցեալէս հասու երկաթի մը պաղը այնչափ
աւելի կը գլխաւոր կուրծքի մէջէն անցնելով
երկուքի կը լսածնէ սիրտը , ջնջելով անոր
լսարանումներուն երազուն գինովութիւնը ու
կեանքը « խլեակի » մը պէս անտեղի ու
անպարզի մը նոր յազումներու հասանքին
անձնը :

Այս աշխարհը⁽¹⁾ անձանիօթէր ինծի Ի Հինը
բոլորովին հակասեան է ասոր, Ամէն քան
փոխում են հոս և նոյն իսկ ցրեկին պայ-
ծաւ արեւը, որ չեղակի պատահանէ մը
հազիւ քանի մը լայրեկան կողայ նայել
ինծի, յազնաձ հակաին վրայ քանի մը տկար
ցոլքեր աստաղներով, որոնք իրենց հին
փայլը ու ջիւղը ցնցելու առուգութիւնը մոռ-
ցեր են կարծես:

Բաղդատուիժեան որ կէ քէ չեմ գտներ
հինին աւ Խորին միջնէ : Ժամացոյցը , որ մե-
նջալուս : զգոյցապէս որ միջն աւաւստու :

(4) Ծնունդը՝ Սրբերեան Էֆեն, ինչպես յայտնի է, հրաժարելով ուսուցչական ասպարեզի՝ առեւտրական ասպարեզը ընդգրկեց եւ անոր կ'ակնարկէ իր «նոր պլանային» քաջատուութեամբը:

քանակա՜ն անտարբերութեամբ իր սլաքներով յախանեալան գէրօն իր բոլորէ՜, չարթուան մէջ հագիւ բանի մը անգամ իր հանդիպի անորոշ նայուած քիս եւ իր լուռ անտարբերութեան մէջ ան միայն մնաց որ խորտակեալ աստիճան ուժգնութեամբ կը սարսէ հոլթիւն , յիշեցնելով աննշուեալ դժմքերը մանուկներուն որ ճիշդ այդ պահուն նստած են դրանեղաններուն վրայ , զանգաղը , որ կը զարնէ ցոյց տալով դասին սկիզբն ու աւարտումը , կիրքերը , որ կը բացուին ու կը գոցուին լինի համակերպութեամբ , վերջապէս այն մանկական միջոցաւորը , որ գերեզմանէն ետքը միակ միջավայրն է դրախտի երանութեան յիշատակը պահող — . տա՛ն ասոնք կը մտաբերեմ չարթուան մէջ , ամէն անգամ որ անորոշ նայուած քիս իր հանդիպին անգլայ ժամացոյցին սլաքները . . . :

Բայց չէ՛, ժամայայտները անզգայ չեն
երբեք՝

Կեանքերնուդ մէջ տնչուշտ հանդիպած էք անոնցմէ շատերուն, պատին վրայ դռմուած, որ ամէն ժամը լրանալուն հնչել կըսկըտին, հատիկ հատիկ, մուելական զանգակի վը պէս, մեկնող ժամուն ետեւէն։ Ատոնէն մը ի վեր, իրենց ծոցը եղանակներ սլահալ ժամացոյցներու ալ հանդիպած եմ, սիրուն պարերու, թաշտուն երազներու եղանակներ, որոնք կարծես դիտամար դրուած են՝ յաւերժական անցնումին սարսուռները ամոքելու համար։

Ու տեսած ալ եմ ծերուկ ժամացոյցներ
Մերսոպեանի խոշոր ժամացոյցին ոչն, որոնց
ազակիին մէկ մասը խորտակուած է, սլաք-
ները չարմելէ դադրած, որ ալ չին ուզեր
ժամը նշանակել, յառաջացումի յազումովը
առի իրենց տէրերուն սրտերուն բարարելէ
դադրած ըլլալուն համար: Կեանքիս մէջ ա-
տեններ ունեցած եմ որ ժամացոյցը, կործա-
նիս փարած, կարծած եմ թէ մտերիմ մըն է,
թէ յոգի ունի զիս մեղքեղ, որ նոյն իսկ
երջանկագոյն օրերու մէջ դադրած է գոր-
ծել, մտոյնեղու հաւոր ժամանակին անցնիրը:

Բոլոր գայրոցները, ռուկից տնայա՝ Գաաը-
գիւղի Արամեանէն մինչեւ Իգմիրինները,
մաս առ մաս ամբողջութիւն մը կազմած են

կուրծքիս տակ, զորս ոչ մէկ օր պիտի կա-
րենամ ջնջել:

Վայրկեանի մը համար գնե՛ կուզեմ ետ
կանչել անցեալս, խղճս խաղաղելուն եւ ք-
սեղս համար հեռաւոր բարեկամներուն թէ
վարժապետական կեանքը չխնդրեցուն համար
չէր որ թողուցի դպրոցը ու եթէ թողուցի
գալիս միայն միտա խորտակեմք վերջն էր
որ թողուցի:

Նոր դպրոցն երկրորդ օրը Մամուրեան կը
մեռնէր: Միքում ու երջանիկ մեռած շան
եւ շիտակը ըսելով հոգիով բախճացի այդ
մահուան: Այդ միջոցներուն Սարբեան կամ-
ուած հարս անկողին ինկած էր: Որչափ կը
խլէմ, Աւետիքի միջոցաւ առաջին գթութեան
կոչը իմ եղբայր հայ ուսուցչութեան ուղ-
ղուած օգնութեան կարծաւ հայ վարժապետի
մը համար: Բանի մը շարժաթ վերջը Մա-
րբեան շրջանդանցին մէջ կը մեռնէր, ա-
ռանց այն սիրտանքին, թէ իրմէ վերջը Գը-
թաթիքը պիտի երկարէր իր վաղուկները
իր որբերուն ինչ որ այնքան ազնու-
թեամբ բնա Սուրհանդակ:

Իր յուզարկանքով թեան գացի Կրկնուած
ու տխուր: Մտած եցի թէ ինքը վերջինը չէր
թէ գուցէ ուրիշներ ալ պիտի ըլլային իրեն
հետեւող:

Գերեզմանէ վերադարձին կերթանք Գու-
լուստ էֆէնդինեց անունը, որ այրին եւ որ-
բերը, աչքերին արցունքով կընդառնէին:
Հոն Սարբեանի նորածին մանկիկը ինծի բն-
րին: Կրկնուած ցն մամիկնայիս քցմիկնայ զի-
յով Դեռ քանի մը օրուան լոյս տեսածս
ինկճ աղան հետաքրքիր նայուած քով չորս
կողմ կը դնակ: Անոր համար կեանքը
հանրային գթութեան կարծաւ կեանքը գե-
նար կը սկսէր այն պահուն, ուր հայրը կը
վերջացէր իրենը Ապր 22 Հիւանդանոցին
մէջ, իր գլուկները գրկելու հաճոյքն առ-
գամ գլխուած:

Տրտմագին չրթուքս անկած: Լացի
աղաւ մը պէս: Հոն կը վերջանար ուսուցչու-
ման տաղարէզս: Գեղեցիկ մասնայ շրտ
կողմս նայելու ու կերթաւ դպրոցին հրաժա-
րակաւս կը գրկեմ: Աւետիքն լնցած էր
Տասնչորս օր: Կողմէին շարունակեցի

դպրոցը մինչեւ յաջորդ մը գտնելին: Այդ
15 օրերու կրած հոգեկան տառապանքս
Աստուած միայն գիտէ: Վերջին շարաթ օրը
վարժապետ բնկերներս, բարեկամս տեսչը
եւ բոլոր աշակերտները կը հաւաքուին: Բա-
նի մը խօսք կուզեմ խօսիլ մնաք բարովի:
Իրաւէ մը կուգայ ուր կընկրկիմ: Դեռ ետ
կրնամ դառնալ: Բայց չէ, բազում կընկէ
զիս: Պէտք է մեկնիմ:

Աշակերտներս արցունքոս կը հաւաքուին
չուրս: Աւետիքն ձեռքերը կը սեղմեմ: Կեան-
քիս մէջ երբեք այդչափ անմեղ օրեր չկի-
սի չի սիրեն զիս նորէն: Կողմէս կընկէ
Մարգարիտ գնուր համարելով մեկնեցայ:
Բանի մը օրս ետքս շուկային տեղանքին
համակերպելու առաջին փորձերուս մէջ Պու-
սոյ Ուսուցչական Խորհուրդին հաւաքով կա-
յովանը բերաւ ինծի Բէ սեփեան: Կոր կորս-
ւած կը կարծէի զայս: Զիս արգելադրու
Սարբեանի թուղթերուն մէջէն գտնի էին:

Կողմէս լնցի: Զիս արգելադրու
Դպրոցական անմեղ ու երջանիկ օրերուն
եւ այս օրուան միջեւ անհուն անջր-
պետ մը ցուցադրել չէ նպատակս: Դժգո-
հութիւն մը չկմ ունեցած երբեք նոր կեան-
քիս մէջ: Կար պարտականութիւնս անվեր-
երը կատարեմ: Կողմէս գողնալով թեամբ մը
կողմէս հոգեւ:

Հին մէկ երազս եղած էր մօակն ապրիլ
այն կեանքին մէջ ուր կը դիմէր գուարթ ու
կայտառ մանկութեան դպրոցը թողելէն
վերջը: Անրաւ հաճոյք մըն էր ինծի համար
ուսուցչական իրականութեան տաղարէզ մը ունե-
նալ: Եւ այս օրս կընկրկումս: Խոյնաւոր մէկ կըն-
տոյ Գրիգորի գրեմ անոնց կեանքէն ու մանա-
ւանդ այն ամբոյն կեանքերէն որ 12-13
տարի միայն դպրոցի արեւովս հայրս գե-
նաւորուած, կուգան ամ գունել անըյո ան
արեւ վաճառատուններու խորերը:

Ու վաղանցուկ ներքին այն օր կուգան
գողնալով մէկ վայրկեան այդ վախճանե-
րուկը: Գեւ չը կուգան: Եկարգիրներու
կրամ: Գրիգորի ոգեւորեն զիս եւ ուժ տան
ինծի, որ սիրտս երկուքի բաժնեմ, մէկը
հին կեանքիս ու յիշատակներուն, որ միւս
մասը նոր անպարէզի մը նորագոյն յուզում:
Երբեք վերադառնալով:

Իգմիր Խոյնաւորս Դ ՈՐԲԵՐԵԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ԹՐԶԱՆԸ

ՇՐՋԻԿԻ ՆՕՅԵՐ

(Վ.)

Շոգեհնաւին մէջ

Այդ կողմերու անձրեւը անուշ հոտք մը ունի, որուն տեսքը ճշմարիտ վայելք մըն է : Մայիսի կարմրուկ արեւին հետ, անձրեւները կը սկսին տեղաւ : Արեւադարձի տկար արփին չի կրնար պատուել թխապահած սեւութիւնը ամպերուն, որոնք ամիսներով կը կախուին երկինքին գոգէն, անդադրում անձրեւ մը քամելով իրենց ծիծերէն, հեղեղներու պէս : Այդ եղանակին, քաղաքին շուրջը ցանառած այգեստաններուն բնակիչները կը քաշուին խարխուլ հիւզակներու կամ ծառի բունէ շինառած խղիկներու մէջ, որոնց տանիքը կը ծածկեն փղի մորթերը, շեղակի փռուած, ճիւղերէ կտակարայի մը վրայ : Մշակները, իրենց ընտանիքին անդամներովը, այդ աղքատիկ հիւզակներուն տակ քաշուած, ամբողջ քանի մը ամիսներ, անձրեւին թփրտուքը մտիկ կ'ընեն, տերեւներէ եւ չոր ստերէ վառուած կրակի մը շուրջը :

Քէյի թաուն ոտք կոխելը, ինծի համար մէկ սիրտանք մը միայն ունեցաւ : Շոգեհնաւին ճնշող մթնադրաւէն դուրս նետուելով, երբ բացօթեայ զրօսավայր մը կը փնտռէինք քաղաքին մէջ, աչքս մարդու մը հանդիպեցաւ : Թուած երեսներով, ասորիքը առած ծերուկ մըն էր, համակրելի, զուարթամիտ : «Դրսերեւոյթ» էն դատելով : Քաղինոյի մը դուրսիցին, մարմարէ սեղանի մը առջեւ, լրագիրներու դէզի մը մէջ կորսուած, — գուշակեցէք նայիմ ինչ պիտի ըլլայ ըսելիքս, — հայերէն բան մը կը կարգար, կ'ըսէր կուրծքին փակցուցած, ակնոցին վրայէն նայելով :

Ընկերոջս թեւը մանելով, կը մօտենամ իրեն, եւ, երեւակայեցէ՛ք զարմանքս, երբ կը տեսնեմ որ կարգացածք . . . Մասիս է, սեպտեմբերի թիւ մը, որ նոր հասած ըլլալու էր հոն : Առանց թեթեւումի, կ'երթամ տնկուիլ սեղանին առջեւ, համարձակ բարեւ մը տալով, եւ հարցնելով :

— Կը ներէք, Պարոն, հա՛յ էք . . . :

Ծերուկը, առշահար զարմացումով մը, շուարած, երեսս ի վեր կը նայի, դողդաշտ ձեռքը երկնցնելով ինծի, զոր կուշտ ուրախութիւնով մը կը սեղմեմ :

— Այո՛, — կը պատասխանէ, աղաւաղած արտասանութիւնով մը, եւ չի կրնալով մեկնել առեղծուածային անակնկալը, վուրկէ՛ց կուգաք . . . հա՛յ էք . . . նզընցէք . . . :

Ընկերոջս հետ, կը տեղաւորուինք անմիջապէս քովը, ու կը սկսիմ անվերջ հարցափորձերու :

Կը պատմէ թէ ինք միակ Հայն է երկրին մէջ, որ շատ տարիներ առաջ եկած հոն, տեսակ մը ներկի արտածութեամբ կը գրադի, եւ բաւական հարստութիւն շինած է, բայց ալ շատ ծերացած ըլլալուն, չի համարձակիր ծովերէ ցամաքներէ դժուար ճամբորդութիւն մը ընել, ծննդավայրը վերադառնալու համար :

Հակառակ այդ օտարտաի երկիրը նետուած ու տարիներով հոն մնացած ըլլալուն, այնքան տաք միտք մըն է մնացեր իր ծննդավայրին, որ, անգիրտակ չմնալու համար հոն տեղի կեանքին, մեծ ուշադրութիւնով կը հետեւի եղբւր մեր լրագրութեան օրը օրին արձանագրած ազգային կամ գրական ամէն լուրերուն, բաժանորդ գրուած ըլլալով Պոլսոյ հայերէն քանի մը թերթերուն :

Իր այդ տարիքին մէջ, ուր մարդ ամէնէն աւելի ցնդածութիւններով կը գրադի, մոյի ընթերցատիրութեան մը նշանները ցոյց կուտար ան. — տեսնելու էին զինքը, մեր տափակ շուկացիութիւններ միայն սիրող աղաները, Մեծ հետաքրքրութիւնով հետեւեր է գրական հրապարակին վրայ յուզուած խնդիրներուն, — «Նորավէպ»ի վէճին, «Բաւականութեան» «Հին»ի ու «Նոր»ի խնդիրներուն, եւ գրական բոլոր երեւոյթներուն, Պոլսեցի գրողէ մը աւելի հմտանալով անոնց :

Մեծ խանդավառութիւնով, զոր երիտասարդ գրասէր մը անգամ չպիտի կրնար ունենալ, ծերուկս ինծի խօսեցաւ երկար առան, հայ գրականութեան եւ լրագրութեան վրայ, որոնց մասին գրողէստէ մը աւելի հմտալից կարծիքներ կը յայտնէր, ծրագիրներ կը

պարզէր գրականութիւնը ճշմարտապէս բարձրացնելու համար, իր ինկած վիճակէն:

«Խաւարակուն Ափրիկէ»-ի էն հետաւոր անկիւններէն մէկուն մէջ, ի՞նչ բան կրնար աւելի մեծ հաճոյք պատճառել, քան այն անսգիւտ բաղդաւորութիւնը որ առիթը կ'ընծայէր ինծի՝ ծերուկի մը բերնէն այդ խօսքերը մտիկ ընելու: Հայ ծերուկի մը, որ, մեր խելքով, պէտք էր մոռցած ըլլար հայերէնն իսկ, նետուած անծանօթ անկիւն մը, ուր իր լեզուն չէն հասկնար, չէն խօսիր:

Հմուտ բեւեռագէտի մը պէս, որ խորհրդանշանական ամէն զիր կը կարգայ, բայց որուն լեզուն չի կրնար խօսիլ, սքանչելի կերպով կը հասկնար հայերէնը, բայց տարիներով չի գործածելուն, չէր կրնար խօսիլ զայն, գրասէր ծերուկը, ձօն տ' Ամբար, ինչպէս կրճատած էր իր երկարածիզ անունը՝ Յովհաննէս Համարձուժեանէն, անգլիացի վաճառականներու գանգատներուն վրայ, որոնք չէն կրնար արտասանել եղբւր այդ խրինջոյ անունին երկար չլիժան: What a devil is that! . . . ըսելով շարունակ, անոր:

Տխուր ու կարօտագին ողջերթով մը կը բաժնուինք այդ գիշերը Բէյի Թաունցի միակ Հայէն, երկու օր ետքը արեւմուտք ուղևորելու համար:

Յօդվելն

Աձուխ առնելու համար, չոգենաւիս կը հանդիպի Յօդվելնտի կղզիներէն մէկը, ուրիշ յօթերս կը յանձնեմ թղթատարին:

ՍԳԷԼԼԱ

ՏՈՒԹ. ԳՐԻԳՈՐ ՃԵԼԱԼ, նախկին եփաղեռն եւ ենդեռն Բարիգի հիւանդանոցներուն, եւ շխարհամով պատուում Assistance Publique կողմէ: 14 տարի Բարիգ անցունելէ ետք, որուն 6 տարին իբրեւ բժիշկ, մայրաքաղաքս հաստատուած է: ՏՈՒԹ. Գ. ՃԵԼԱԼ կը դարմանէ, բացի ընդհանուր հիւանդութիւններէ, մասնաւորապէս ջղային եւ մորթային հիւանդութիւններ: Ամէն օր, չորեքշաբթիէ զաւ, կէս օրէ վերջ հիւանդ կընդունի իր տունը՝ Բերա, Սագրգ Աղան, ք. 39: Երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաքաղաքներ՝ Սամաքիա, Բրիսեան դեղաւանքն կից տունը:

ԳՐԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Բանկալքի Առետր. եւ Լեզուագիտական վարժարանին հիմնադիր տնօրէն Յակոբ Էփ. Բագրատունի մէյմէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց Երզնկայի Քրիստինեան աղջկանց վարժարանին եւ Հալէպի ազգ. երկսեռ. վարժարանին:

Նոյնպէս, գրասէր ազգային մը մէկ օրինակ տարեկան Մասիս նուիրեց Վանայ երամեան վարժարանին: Այս քերքերու առաքումը սկսաւ նոյեմբերի սկիզբէն:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

Ս. Պատրիարք Հայրը՝ իր հետն ունենալով Պատրիարքարանի Ա. գործակաւար Տէր Ներսէսեան Տիգրան Էփէնտին՝ երկուշաբթի օրը Բ. Դուռը գնաց եւ շնորհաւորական այցելութիւն տուաւ Մեծ — Եպարքոս Բարձր. Սալիս փաշային: Տ. Բարթեղիմէոս արքեպիսկոպոս եւս երեքշաբթի օրը այցելութեան երթալով, շնորհաւորեց Ն. Բարձրութեան Մեծ — Եպարքոս անուանուիլը:

Իսապական նորընտիր դեսպան Մարքի տի Մալաթիո շաբթուս մէջ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր, իր Կ. Պօլսոյ դեսպան անուանուելուն առթիւ Ն. Ամենապատուութեան հօղմէ եղած շնորհաւորութեան համար:

Նպաստից Յանձնաւորդովը իր երեքշաբթի օրուան նիստին մէջ կարգադրով Մուշի Պատր. փոխանորդ Տ. Խոսրով Ծ. վրդ. ի տեղեկագիրը՝ ի մասին Ս. Առաքելոց վանքի որդանոցին, որ արգահատելի գոյներով կը նկարագրէր այդ որդանոցին աղոյք վիճակը, գրեթէ մերկ եւ անօթի, որոնց իսկոյն 50 ոսկիի նպաստ մը հասցնել:

Խառն ժողովը իր անցեալ ուրբաթ օրուան նիստին մէջ մերժեց Տ. Եգէկիէլ վարդապետի հրաժարականը Տիարպէքիի առաջնորդութենէն եւ իր Ս. Նախագահին յանձնեց՝ համոզել զինքը որ փութով իր պաշտօնավայրը վերագտնայ: Ինչպէս յայտնի է, այս հրաժարման առիթ տուած էին Տիարպէքիէն հասած գանդատագիրներ՝ ընտրութեան օրինաւորութեան դէմ: Խառն ժողովը՝ յետ քննութեան՝ եղած դիտաւորութիւնները անհիմն եւ ընտրութիւնը օրինաւոր գտնեց

ԹԻՒ 4

ԹԵՐԹՕՆ «ՄԱՍԻՍ»

ՄԱՏԼԵՆԻ ՄԵՂՔԸ

Հեղ. ՏԻԿԻՆ Բ. ՔԱՌՕ

Թարգմ. ՏՕՄԻՆՕ

Ամուսնութիւնը յուլիս 20ին որոշուած էր : Բայց որտեղ կ'ընդունէր այդ օրուան յուսալով հանդատութիւնս գտնել անդարմանելի իրողութեանը մէջ : Վերջապէս այդ վայրկեանը հասաւ : Զեռքովս հազուեցուցի Լուիզը, իր շրջագիւտին ծածկող տանիքներովը պճնեցի զինքը եւ իր գլուխը դրի սպիտակ պատկը : Բնաւ չէի տեսած զինքը այդքան գեղեցիկ : Եկեղեցի դասինք : Զարիս փորձեմ նշկարագրել արարողութիւնը կատարած միջոցին զգացած տառապանքս : Այս տեսակ ցուերը իրապարեւ մարդուս կարողութենէն վեր է : Այն տեսակ մը սքանչացումը որ ուժ տուած էր ինծի մինչեւ այն տեսնի տնկեալ տացաւ յանկարծ եւ ինքզինքս գտայ անաւոր իրականութեան մը հանդէպ : Ռոպէս հոն էր իմ դիմաց : Կը սիրէի զինքը եւ կը փախչէր ձեռքէս : Իր հանդարտ վիճակը, իր տնտեսով եւ բարձր ճակատը տեսնելով կը բարկանայի : Իր վրայ նշմարել կ'ուզէի տառակոյսի կամ ցաւի հետք մը, չնայլ մը գտնէ : Ո՛ր կը կապէի Լուիզի որ չէր գիտցած գուշակել իրեն համար քրածներս : Ամբողջ մարդկութիւնը կը մեղադրէի, բռնելով ինքնին թէ իրարարմամբութիւնը թող տալու չէր որ այս տեսակ անուսնութիւն մը անցի ունենայ եւ իմ օգնութեանը կ'անչէի երկնային շանթի հարուած մը : Ծունկի եկած, զլուխս երկու ձեռքերուս մէջ, ալօթել կը կարծէի, մինչդեռ մարմնուս բոլոր գոյնները գրգռուած թողնող եղած էին : Եւ սակայն ամուսնութիւնը կատարուեցաւ քահանային օրհնութիւնովը եւ ամէն մարդ տրախ եղաւ : Աստուած չուզեց արգիլել զայն, արեւը իր ճառագայթները մեր վրայ արտակէ չի գաղթեցաւ եւ ո՛չ ոք կասկածեցաւ յուսահատութեանս վրայ : Կ'անցնէր իմ հոտը գլխուս վրայ

Օրուան մնացորդ ժամերը սահեցան իրիկուան պարահանդէսին պատրաստութիւններովը : Թէեւ եղանակը յատաճացած էր, բայց Լուիզ ուղած էր իր բոլոր բարեկամուհիները շուրջը հաւաքել, որով հրաւիրեալները բազմաթիւ եղան : Ապարանքը եւ պարտէզը լուսազարդուած էին շքեղ կերպով : Լուիզ իր թանկագին գոհարեղէններովը ճամբարապէս գերբնական փայլ մը ունէր, իր նայուածքը եւ ժպիտները կը շողջակէին : Այն հանդէսին յիշատակը տարտամ բան մը թողած է մշտնջեն մէջ : Հրաւիրեալներուն շուրջը կը դեպքէի գիշերաշրջիկի մը պէս : Խառնեց անանկուս եւ մտածելու անտանելի ծանրութիւն մը ունենալով գլխուս մէջ :

Պարահանդէսին վերջանալուն մօտ յոգնած, գացի քաշուեցայ զարդասենեակին այն անկիւնը ուր Ռոպէս իրիկուն մը իր սէլը խոստովանած էր ինծի եւ հոն, միւս միակ, խոշոր ծաղկամաններուն տակ կիսով ծածկուած, երեկոյթին իրարանցումին մէջ ամենէն մոռցուած, միաքս բերի այդ օրուան կարճատեւ ու աղետալի տեսարանը : Ո՛րքան սին յոյսով մըն էր որ վայրկեան մը հոգիս գինովցած էր այդ օրը : Իրաւ է թէ ամէն բան կորսուած էր, անդամաւոր կերպով կորսուած եւ իմ ուղեւղիս : Գլուխս կը գառնար կէտէն բան սուգի մէջ կ'երեւնար շուրջս : Վարը որուն յորձանքին մէջ զուարթ պարզները կը խայտալին հիմա, հիւանդ ուղեղին մէջ մեռելական եղանակի մը պէս կը հնչէր : Ծննդեաններս ուժգին կը զարնէին եւ կը կարծէի լսել զանգակներու տխուր դողանքը : Աչքերս մթաղնող անպին մէջէն նշմարեցի հօրեղբայրս որ զիս կը փնտռէր : Եւ մ'ըրի զէպի իրեն երթալու համար : Բայց չի կրցայ ոտքի ելլել եւ պարտաւորուեցայ անոր թեւէն լուսնէ վար ճիւղալու համար : Կ'ընկնէր իմ հոտը գլխուս վրայ

— Ի՞նչ ունիս, աղուսր աղջիկս, ըսաւ գորովանքով . . . անհանգիստ կ'երեւնտս կ'որ . . . յոգնեցար, այնպէ՞ս չէ . . .

— Այո՛ . . . յոգնած եմ . . . թո՛թովեցի առանց ըսածս գիտնալու . . .

— Պէտք է որ երթաս հանգչիս . . . Մատ-
լէնս, կենալու կարողութիւն չունիս . . . վեր-
ջապէս աս տաժանելի օրն ալ անցաւ լըն-
ցաւ, փառք Աստուծոյ, եւ կը վախճում որ
հիմա ալ դուն կ'ելլես կտրութիս . . . Այն-
քան աշխատեցար, այնքան աղէկ կարգա-
րեցիր ամէն բան . . . Աստուած պիտի օրհ-
նէ քեզ, զաւակս, եւ ծերունի հօրեղբայրդ
ալ պիտի ապրի՝ քեզ երջանիկ ընելու համար
ինծի անանկ կուգար որ պիտի մեռնէի
նստած տեղս . . . — Մտիկ բրէ՛, աղջիկս,
շարունակեց ձայնը մեղմացնելով. Լուիզն ալ
շատ յոգնած է, խեղճը, զնա՛, բարի Մատ-
լէնս, անգամ մըն ալ իր կորսնցուցած մօրը
տեղը բռնելու . . . Տա՛ր, հանգստացո՛ւր
զինքը իր սենեակը:

Կարողութիւն չունէի պատասխանելու,
բայց հնազանդելու շա՛մ քաջութիւն ունեցայ,
Լուիզը կանչեցի եւ մինչեւ իր հարսանեկան
սենեակին դուռը տարի զինքը, բայց հոն
անյաղթելի զօրութիւն մը կեցուց զիս. կու-
զէի որ մինակ ինքը մտնէ այդ դրախտու ուր
ինքը տուածին պէտք էր իշխել եւ ինձմէ
բան մը շանցնէր հոն, ո՛չ իսկ ծաղկեփուն-
ջիս խոստափուկ լուրմուռքը: Համբուրեցի
Լուիզը եւ սենեակս վերադառնալով, հոն
իմկայ գգայագիրի:

Նոյն գիշերը վրաս հիւանդութիւն մը ե-
կաւ որ մէկ քանի շաբաթներ տեսց եւ քիչ
մնաց պիտի մեռնէր զիս: Գրեթէ շա-
բաթնակարար կը գառանցէի եւ խելքս՝ գլուխս
եկած ատեն, գաղտնիքս գուցէ մատնած
ըլլալուս վախովը կը շարժարուէի: Հօրեղբայ-
րըս ու Լուիզ բնաւ մինակ չէին ձգեր զիս.
ճգնաժամս անցնելէ վերջ, միշտ իմ մօտս
կը գտնէի զիրենք, հիւանդութեանս ականա-
նշանները հետազոտելու վրայ: Երկու երեք
անգամ ալ, կարծեցի Ռուպէնը նշմարել.
բայց երբ ինքզինքիս կուգայի եւ կը տեսնէի
անոնց անձկութեամբ լեցուն նայուածքները,
փոխանակ երախտադարտ ըլլալու, կը նեղ-

ուէի զառանցանքներուս վկայ եղած ըլլալ-
նուն համար: Իրենց կսկիծը, իրենց ար-
ցունքները չէին յուզեր զիս, ընդհակառակը
անոնց այդ վիճակը տեսնելով վտանգի մէջ
ըլլալս կը գուշակէի եւ մահուան մօտենալը
տեսնելով ո՛չ ցաւ կըզգայի, ոչ ալ գոհունա-
կութիւն: Մօտալուս վերջաւորութեան մը
տարակոյսներուն մէջ, միակ մտածում մը կը
մնար իմ մէջս, այն էր թէ կը սիրէի Ռուպէ-
նը եւ ստիպուած էի յաւիտենապէս ծածկել
այդ սէրը:

Հիւանդութիւնս մեղմացաւ, բայց զա-
ռանցանքիս մէջ գաղտնիքս մէջտեղ հանած
ըլլալուս վախը անտանելի կըլլար ինծի:
Շուրջս գտնուողները կը հարցափորձէի, մաս-
նաւորապէս կը քննէի հօրեղբայրս ու Լուիզը
որոնց դէմքին վրայ կը կարծէի նշմարել ան-
սովոր արտայայտութիւն մը, նշան մը: Ան-
վերջանալի կերպով կը վերսկսէի հետազո-
տութիւններս, մեռածներու յատուկ յարա-
տեսութեամբ ու խորամանկութեամբ: Անոնք
բան մը չէին հասկնար իմ այս տարօրինակ
մտատանջութիւններէս եւ ինծի կը պատաս-
խանէին հաճելի կերպով, տենդը պատճառ
բռնելով մտային կարողութիւններուս խան-
գարումին: Զուր տեղը ուզեցի հարցափոր-
ձել զիրենք առանձնակի կամ մէկտեղ ե-
ղած ատենին, իրենց պատասխանները կը
կրկնէի ու կը կրկնէի, զիրենք յանկարծակիի
բերելու ջանքեր ընելով, բայց բան մը չհրցայ
հասկնալ եւ կամաց կամաց համոզուեցայ թէ
բան մը չէին գիտեր գաղտնիքէս: Այս հա-
մագումը ապաքինումս փութացուց եւ վեր-
ջապէս զգացի նորէն ապրելու անուշութիւնը
եւ այն անբաղդատելի գոհունակութիւնը զոր
մահուան ճիրաններէն ազատող մը կրնայ
ունենալ: Ոտքի ելած օրս, բժիշկները խոր-
հուրդ տուին որ գիւղ փոխադրուիմ:

Սեպտեմբերի մէջն էինք, գեղեցիկ եւ
զաղջ օդով մըն էր որ գացինք Վիլ-Ֆէրիի:
Հօրեղբայրս վախճալով որ կը յոգնիմ, չու-
զեց որ երկաթուղիով երթանք եւ զիս,
Լուիզն հետ կառքով զրկեց: Ինքն ալ,
գործով զրաղած ըլլալուն, հետեւեալ օրը
միայն պիտի գար: Ռուպէն մենէ ասալ գա-
ցած էր առտուն եւ իրիկունը երբ ժամը

եօթնին մօտ հասանք, մեզի դիմաւորեց դրան առջեւ. կառքէն ելած ատենս օգնեց ինծի եւ մինչեւ սենեակս տարաւ զիս : Իր հրամանով, ճաշանդանը պատրաստած էին պառկելու սենեկիս քովի պզտիկ սալօնին մէջ : Զահաշտանակները սովէնքն ալ վառուած, հանդիսաւոր օրուան մը տեսքը կուտային սենեակներուն : Նշմարեցի որ ծաղկամաններն ալ իմ արտօթած ծաղիկներովս լեցուած էին եւ իմ սիրած գիրքերէս մէկ քանի հատ, սեղանի մը վրայ դրուած էին թիկնաթուռի քով : Ընթրիքը բերին, Ռոպէս եւ Լուիզ ծառաները դուրս հանեցին, ուզելով անձամբ ինծի սպասարկել, սրմէ հաճոյք կը զգային, ամէն փափագներս գոհացնելու ուշադիր եւ ո՛չ իսկ շարժում մը ընելու յոգնութիւնը թողով ինծի : Այդ իրիկունը, յիշատակներուս էն գեղեցիկներէն մէկն է : Զէի կրնար իմ երկու բարեկամներէս զատուիլ եւ երթալ հանգչելու. երես առած տըղու պէս կը պահանջէի որ մնան քովս, Լուիզի կը կառչէի, հազար պատրուակ կըստեղծէի սրպէսզի չմեկնին քովէս : Բայց վերջապէս պէտք եղաւ բաժնուիլ իրարմէ :

Մէկ քանի շաբաթներ անցան այսպէս հեշտին երազանքի մը մէջ, դեռ տկար էի եւ խորհելու, յիշելու կարողութիւնը կը պակսէր ինծի. քիչ քիչ սակայն ուժս տեղը եկաւ եւ միեւնոյն ատեն զգացի կեանքիս դառնութիւնը : Կը սկսէի դիտող ըլլալ, բնականաբար բոլոր ուշադրութիւնս Լուիզի եւ Ռոպէսի տուած էի. երկուքն ալ կատարելապէս երջանիկ երեւցան ինծի, կը ջանայի որ ախտաւոր այդպէս ըլլալնուն համար, բայց յաճախ պէտք կը ըլլար մաքառիլ դառն վհատութեան մը մերձեցումին դէմ :

Այս վիճակին մէջն էի երբ Բարիզ վերադարձայ : Լուիզ եւ Ռոպէս, երկուքն ալ եւրիաստարգ եւ գեղեցիկ, բարձր ընկերութիւններու մէջ փայլեցան ու փնտռուեցան : Ամէն իրիկուն նորանոր գուարճութիւններ կը յափշտակէին զիրենք մեր մէջէն. ուզեցի նախ հետեւիլ իրենց, բայց այս աղմկալի ու սովորական դարձած կեանքը կը յոգնեցընէր զիս առանց զուարճացնելու. հետեւաբար քիչ տատնէն ետ կեցայ անկէ, ա-

ռողջութեանս տկար վիճակը պատճառ բռնելով եւ մինչդեռ Լուիզ եւ իր ամուսինը հետզհետէ ստեղծուող երեկոյթներու մէջ կը փայլէին, ես հօրեղբօրս քովը կը մնայի : Այսպէս է որ յամառաբար գլուխս քաշած, ձեռքս երկար գիշերներու անցուցի ցաւալի վիճակիս վրայ մտածելով : Առողջութեանս ակներեւ խանգարումը շուրջս եղողներուն միտահոգութիւն պատճառեց եւ ամէն ոք կրկնապատկեց իր խնամքները, թէ եւ վշտերուս աղբիւրը անձանթ կը մնար իրենց եւ ջանքերնին ապարդիւն եղան :

Գարունը վերերեւցաւ. սաղոնները գոցուեցան հետզհետէ եւ գիւղը վերստին իրեն քառեց փափփաւոր հիւրերը : Մինակ ես չի փոխուեցայ. կերթայի, կուգայի, կը գործէի, կը խնդայի ալ, բայց հոգի չիկար վերաս : Թէ եւ ուժս սկսած էր տեղը գալ դաշտերուն բուրումնաւէտ ու մաքուր օդը շնչելով, բայց բարոյական ուժս կը քայքայուէր արագաբար եւ ինքզինքս կուտայի իմ գաղտնի մտածումներուս : Անձնասիրական ձգտումներ որոնք կը քնանան հոգիին մէջ, կը սկսէին օր օրի արթննալ եւ անգիտակցաբար կը մոլորեցնէին զիս : Ես որ իմ զուհոգութիւններս լուռ պահելու յիմարօրէն հաւանած էի, հիմա վատաբար կը զղջայի այդպէս ըրած ըլլալուն : Հպարտութիւնը կը մնար միմիայն մէջս, բայց երբ որ զգայի թէ զայն ալ պիտի մատնէի իր կարգին, այն ատեն է որ հասկցայ սոսկումով թէ ո՞ր ատիճան բարոյապէս նուաստացած էի քայլ առ քայլ :

Ե.

Օր մը Լուիզի եւ Ռոպէսի ընկերակցութեամբ ձիով երկար պտոյտ մը ըրած էի եւ ետ կը դառնայինք յամրաքայլ, առանց աճապարելու. Թող տուած էի որ իրենք առաջէն երթան եւ ես ալ կը հետեւէի իրենց պզտիկ հեռաւորութեամբ մը : Ատենէ մ'ի վեր արդէն կը գուշակէի թէ Ռոպէս, զիս սիրել կարծեմէ վերջ, ճշմարիտ հակառակութիւն մը ունեցած էր ինծի դէմ եւ կը տեսնէի որ կը փախչէր ինէ : Շատ անգամներ յանկարծակի բերած էի զինքը, մտայլ ակնարկով մը

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ
ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒԶԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալարա, Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին ու մէն տեսակ շապիկ, օձիք, թեւնոց, գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպամաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու հատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք, թեւնոց, ֆլանել, գուլպայ, թաշկինակ, ոսկեզօծ կոճակներ, փողկապ, դրամապնակ, զմեյի «Չէֆիտ», խոզանակ, սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատուներ նորաձեւութեան, ապրանայ ազնուութեան, յանձնարարութեանց խնամով պատրաստութեան, ու գիներու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուներէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

Ա Ր Ի Ս ԵՒ Ը

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՐԱՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՆՏԱՔԱԼԷ



Վաճառանիչ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանաւորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ :

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանայ դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց աժանութիւնը : Փախաբողներուն՝ քաթալօքը ձրի կը զրկուի :

Մեծ աքանակ գլուս՝ ընել ոգոշները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՔ վաճառատուները, իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ, որ պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՉ.—ՊՊ. Լաքառիեռ. Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքոտեօն :

ՊՈՄՊՈՅ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.—Պ. Մ. Գալֆանան

ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզանբալ :

ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք :

ՎԱՌՆԱ.—Պ. Կեռն Արտիքի :

ԻԶՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան

ԶՄԻՌՆԻԱ.—Պ. Հայրիիս Վառնիկ :

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիւօ Ֆերլանտեզ :

ԻԻՍԿԻԹ.—Պ. Մ. Քափուանօ :

ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքի Շիֆինք :

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան Եղրաք :

ՏՐԱՊԻԶՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան :

ՍԵՖԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՍԹՈ.—Պ. Յակոբ Բոսփատալ

1902

ԹՈՒՐԻԲԵՐԷՆ, ՀԱՅԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ՅՈՒՆԱՇՆ ԼԵԶՈՒԱԻ
ՕՐԱՑՈՅՑ-ՅՈՒՇԱՏԵՏՐ

(AGENDA INTERNATIONAL)

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ի Զ

3. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ, Պաշտոն Հառազ, Կ. Պոլիս

Կը գտնուի Պոլսոյ եւ Գաւառաց բոլոր Գրականութեան
 եւ Թղթականութեան բով

ՄԵԾԱՔԱՆԱԿ ԳՆՈՂՆԵՐՈՒ ԳՈՀԱՅՈՒՅԻԶ ԶԵՂԶ

Ոսկեգոծ փառակազմ 8 Ղր.

Պարզ կազմ 3 Ղր.

Ընտր լաթակազմ 5 Ղր.

Ի Ի Ն Ի Օ Ն

Հ Ր Դ Ե Հ Ի Ե Ի Կ Ե Ն Ա Յ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻԶ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի ձ Ի Ի Ղ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ շնորհք	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

Կ Ե Ն Ա Յ ձ Ի Ի Ղ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ շնորհք	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՓՏՆԵԼ ԱՐԵԻՆԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵԻ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ.**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղջեալ գիներով: Նպատաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո'ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք **ԶԵՐԾ** են այն վնասներէն եւ լուսախաբուրիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաւոյման (accumulation des bénéfices) **ՅՈՒԻ** եւ **ՎՆԱՍԱԿԱՐ** դուրսեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԲԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահապուրուն խան, լիւս. Պանֆային դիւանք

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ